

«Տնտեսական ազատության ինդեքս- 2016»
ըստ «Լեռիթիջ» հիմնադրամի գնահատականների¹

«Լեռիթիջ» հիմնադրամը, «Ուոլ Սթրիթ» օրաթերթի հետ համատեղ, տարբեր պաշտոնական աղբյուրների տվյալների հիման վրա գնահատել և 2016թ. փետրվարի 1-ին հրապարակել է 178 երկրների համար 2016 թ.-ի տնտեսական ազատության ինդեքսները²: Տնտեսական ազատության ինդեքսը գնահատվում է ըստ 10 գործոնների: Դրանք են՝ սեփականության իրավունքի պաշտպանությունը, կոռուպցիայից ազատությունը, հարկաբյուջետային ազատությունը, կառավարության ծախսումները, գործարարության ազատությունը, աշխատանքի ազատությունը, դրամավարկային ազատությունը, առևտրի ազատությունը, ներդրումների ազատությունը և ֆինանսական ազատությունը: Այդ ինդեքսի գնահատման համար կիրառվում է 0-ից մինչև 100 միավոր գնահատման համակարգ, ընդ որում՝ բարձր գնահատականը վկայում է տնտեսական ազատության ավելի մեծ աստիճանի մասին:

Բացի այդ, «Լեռիթիջ» հիմնադրամը դիտարկվող երկրները, տնտեսական ազատության ինդեքսներին համապատասխան, դասակարգում է հինգ խոշոր կատեգորիաների: Այսպես, 80% և ավելի ինդեքս ունեցող երկրները համարվում են տնտեսապես «ազատ», 70.0-79.9%՝ «հիմնականում ազատ», 60.0-69.9%՝ «չափավոր ազատ», 50.0-59.9%՝ «հիմնականում ոչ ազատ», 50%-ից ցածր՝ «ճնշված» երկրներ:

2016թ. տնտեսական ազատության ինդեքսի գնահատման համար «Լեռիթիջ» հիմնադրամի փորձագետները հիմք են ընդունել 2014թ. հուլիսի 1-ից մինչև 2015թ. հունիսի 30-ը ընկած ժամանակաշրջանի տնտեսական ցուցանիշները: Սակայն հարկ է նկատի ունենալ, որ որոշ գործոններ գնահատվել են պատմական տեղեկատվության հիման վրա: Այսպես, օրինակ, 2016թ. դրամավարկային ազատություն գործոնի գնահատման համար հիմք է ընդունվել 2012-2014թթ. միջին կշռված տարեկան գնաճը, մինչդեռ, որպես հարկավորման ցուցանիշ վերցվել են 2015 թ. հարկային տարվա հարկային դրույքները:

Հայաստանի գնահատականները. «Տնտեսական ազատության ինդեքս 2016» զեկույցում Հայաստանի դիրքը վատացել է և աշխարհի 178 երկրների շարքում Հայաստանը ներկայումս գրավում է 54-րդ տեղը՝ նախորդ տարվա 52-րդ տեղի փոխարեն: Թեև, նկատենք, որ տնտեսական ազատության Հայաստանի գնահատականը (67.0 միավոր) բարձր է համաշխարհային միջինից (60.7 միավոր) և տարածաշրջանային միջինից (66.9):

2015թ.-ի համեմատ բարելավվել են կոռուպցիայից ազատության (1.0 միավորով), դրամավարկային ազատության (2.2 միավորով), առևտրի ազատության (0.2 միավորով) և ներդրումների ազատության (5.0 միավորով) գնահատականները, վատացել են հարկաբյուջետային ազատության (2.1 միավորով), կառավարության ծախսումների (1.5 միավորով), գործարարության ազատության (0.4 միավորով) և աշխատանքի ազատության (14.2 միավորով) գնահատականները: Անփոփոխ են մնացել սեփականության իրավունքի պաշտպանության և ֆինանսական ազատության գնահատականները: Վերոնշյալ

¹ *Promoting Economic Opportunity & Prosperity: The 2016 Index of Economic Freedom/Heritage Foundation & The Wall Street Journal, 2016.* < http://www.heritage.org/index/pdf/2016/book/index_2016.pdf>:

² 2016թ. ինդեքսում դիտարկվել են 186 երկրներ, սակայն դրանցից միայն 178 երկրներ են լիովին գնահատվել և վարկանշվել: Անբավարար տվյալների պատճառով Աֆղանստանի, Իրաքի, Լիբիայի, Լիխտենշտեյնի, Սուդանի, Սիրիայի, Եմենի և Սոմալիի համար համախառն ինդեքսի գնահատական և, հետևաբար նաև, երկրի դիրք չի սահմանվել:

գործոններում կատարված փոփոխությունների արդյունքում Հայաստանի 2016թ.-ի տնտեսական ազատության ընդհանրական գնահատականը նախորդ տարվա համեմատ նվազել է 0.1 միավորով (տե՛ս աղյուսակ 1):

Ներկայացնենք «Տնտեսական ազատության ինդեքս 2016» զեկույցում դիտարկվող առանձին գործոնների վարքագիծը: Մասնավորապես,

- «Սեփականության իրավունքի պաշտպանության» գործոնի գնահատականը նախորդ տարվա համեմատ մնացել է **անփոփոխ** և կազմել է 20.0 միավոր, սակայն Հայաստանի դիրքը նախորդ տարվա համեմատ վատացել է 2 տեղով և Հայաստանը աշխարհի 178 երկրների թվում գրավում է 140-րդ տեղը: Ըստ «Հերիթիջի» մեթոդաբանության, 20 միավոր տրվում է այն երկրին, որտեղ «Մասնավոր սեփականությունը թույլ է պաշտպանված: Դատական համակարգն այնքան անարդյունավետ է և կոռումպացված, որ արտադատարանական լուծումներն ու արբիտրաժը տարածված բնույթ են կրում: Սեփականության իրավունքը դժվարությամբ է պաշտպանվում: Դատական համակարգում կոռուպցիան, ինչպես նաև բռնագրավման դեպքերը տարածված են»³:
- «Կոռուպցիայից ազատություն» գործոնի գնահատականը նախորդ տարվա համեմատ **բարելավվել է** 1.0 միավորով և կազմել 37.0 միավոր, սակայն Հայաստանի դիրքը նախորդ տարվա համեմատ վատացել է 1 տեղով և Հայաստանը՝ աշխարհի 178 երկրների թվում գրավում է 96-րդ տեղը: Այս գործոնի գծով երկրների գնահատականները «Հերիթիջը» վերցրել է «**Թրանսիերենսի ինթերնեյշնլ**» կազմակերպության «**Կոռուպցիայի ընկալման 2014թ. ինդեքս**» զեկույցից, որում Հայաստանի գնահատականը կազմում էր 37.0 միավոր: «Կոռուպցիայից ազատություն» գործոնի վերաբերյալ Հերիթիջի փորձագետները նշել են, որ «Հայաստանում Ռուսաստանի հետ միավորվելու և Հայաստանի տնտեսության ու տարածաշրջանային անվտանգության տեսանկյունից Ռուսաստանի ազդեցությունը մեծանալու արդյունքում համատարած կոռուպցիան խորացել է: Ինչպես հայտնում են, կաշառակերությունն ու խնամի-դրացիական հարաբերությունները տարածված են կառավարական պաշտոնյաների շրջանում, որոնք հազվադեպ են քրեորեն հետապնդվում կամ հեռացվում պաշտոնից՝ իրենց պաշտոնական դիրքը չարաշահելու համար: Դատական համակարգը տառապում է անկախության և թափանցիկության պակասից: Ոստիկանության հակաիրավական վարքագիծը դժվարացնում է օրենքի կիրարկումը»⁴:
- «Հարկաբյուջետային ազատության» գործոնի գնահատականը նախորդ տարվա համեմատ **իջել է** 0.6 միավորով և կազմել 83.8 միավոր: Այս գործոնի գծով Հայաստանի դիրքը վատացել է 5 տեղով և Հայաստանը աշխարհի 178 երկրների թվում գրավում է 59-րդ տեղը: Նկատենք, որ հարկաբյուջետային ազատությունը չափում է գործարարության հարկային բեռը, որը ներառում է ինչպես ուղղակի հարկերի, այսինքն՝ եկամտահարկի և շահութահարկի բեռի, այնպես էլ ՀՆԱ-ում հարկային բեռի տեսակարար կշռի ցուցանիշը: 2016թ.-ի զեկույցում ընդհանուր հարկային բեռի տեսակարար կշռը ՀՆԱ-ում նախորդ տարվա համեմատ աճել է 1.4%-ով և կազմել 23.4%, որի պատճառով էլ Հայաստանի հարկաբյուջետային ազատության գնահատականը վատացել է:
- «Կառավարության ծախսումներ» գործոնի գնահատականը նախորդ տարվա համեմատ **վատացել է** 2.1 միավորով և կազմել 80.7 միավոր: Այս գործոնի գծով Հայաստանի դիրքը

³ Աղբյուրը՝ *Promoting Economic Opportunity & Prosperity: The 2016 Index of Economic Freedom*/Heritage Foundation & The Wall Street Journal, էջ 468:

⁴ Նույն տեղում, էջ 98:

վատացել է 8 տեղով և Հայաստանը աշխարհի 178 երկրների թվում գրավում է 47-րդ տեղը: Կառավարության ծախսումները ՀՆԱ-ում 2015թ.-ին ավելացել են 1.5%-ով և կազմել 25.4%. որի պատճառով էլ Հայաստանի գնահատականը այս գործոնի գծով վատացել է:

- **«Գործարարության ազատության»** գործոնի գնահատականը նախորդ տարվա համեմատ **վատացել է 5.2** միավորով և կազմել 77.5 միավոր՝ չնայած այն հանգամանքին, որ «Վերիթիջի» փորձագետները արդյունավետ են գնահատում Հայաստանում գործարարության կանոնակարգման դաշտը: Այս գործոնի գծով Հայաստանի դիրքը վատացել է 12 տեղով և Հայաստանը աշխարհի 178 երկրների թվում գրավում է 37-րդ տեղը: Բանն այն է, որ «Գործարարության ազատություն» գործոնի ցուցանիշները «Վերիթիջի» փորձագետները վերցրել են Համաշխարհային բանկի **«Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը»** զեկույցից⁵: Այդ ցուցանիշները 13-ն են, որոնցից 9-ը նախորդ տարվա համեմատ մնացել են անփոփոխ, 3-ը՝ բարելավվել են և մի փոքր վատացել է միայն 1-ը՝ սնանկության գործընթացի արդյունքում մարված պարտքերի (փոխհատուցման) չափի ցուցանիշը: Դա նշանակում է, որ «Վերիթիջի» զեկույցում Հայաստանի գնահատականի վատացումը կապված չէ Հայաստանում գործարարության կանոնակարգման դաշտի վատացմամբ: Բանն այն է, որ, ըստ մեթոդաբանության, «Գործարարության ազատություն» գործոնը գնահատելիս «Վերիթիջը» առանձին երկրների ցուցանիշները համեմատում է այդ ցուցանիշի գծով դիտարկվող բոլոր երկրների միջինի հետ: Փաստորեն, «Գործարարության ազատություն» գործոնի գծով համաշխարհային միջինն է բարելավվել, որի պատճառով էլ Հայաստանի գնահատականը վատացել է:
- **«Աշխատանքի ազատություն»** գործոնի գնահատականը նախորդ տարվա համեմատ **վատացել է 2.1** միավորով և կազմել 62.2 միավոր: Ընդ որում, այս գործոնի գծով Հայաստանի դիրքը վատացել է 8 տեղով և Հայաստանը աշխարհի 178 երկրների թվում գրավում է 84-րդ տեղը: Բանն այն է, որ «Աշխատանքի ազատություն» գործոնի ցուցանիշները նույնպես «Վերիթիջի» փորձագետները վերցնում են Համաշխարհային բանկի **«Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը»** հետազոտությունից: Ընդ որում, օգտագործվող ցուցանիշների մի մասը հարցումների արդյունք են, իսկ մյուս մասը վերցվում են տվյալ երկրի պաշտոնական աղբյուրներից: **«Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը»** 2015թ. և 2016թ. զեկույցներում այս գործոնի գնահատման նպատակով օգտագործվող հարցումների արդյունքների և ցուցանիշների համեմատությունը ցույց է տալիս, որ դրանք մնացել են անփոփոխ: Սակայն, նկատի ունենալով, որ երկրների **«Աշխատանքի ազատություն»** գործոնը գնահատելիս «Վերիթիջը» առանձին երկրների ցուցանիշները համեմատում է այդ ցուցանիշի գծով բոլոր դիտարկվող երկրների միջինի հետ, գալիս ենք եզրահանգման, որ այդ ցուցանիշների գծով նույնպես համաշխարհային միջինն է բարելավվել, որի պատճառով էլ Հայաստանը հետընթաց է արձանագրել:
- **«Դրամավարկային ազատություն»** գործոնի գնահատականը նախորդ տարվա համեմատ **բարելավվել է 2.2** միավորով և կազմել 72.8 միավոր: Ընդ որում, Հայաստանի դիրքը աշխարհի 178 երկրների շարքում այս ենթահինդեքսի գծով 128-րդն է, այսինքն՝ նախորդ

⁵ Այս գործոնի գնահատման համար Համաշխարհային բանկի «Գործարարության դյուրինություն 2016» զեկույցից վերցրել են՝ ա) գործարարություն սկսելու համար անհրաժեշտ ընթացակարգերի, ժամանակի, ծախսի և նվազագույն կապիտալի ցուցանիշները, բ) շինարարական թույլտվություններ ստանալու համար անհրաժեշտ ընթացակարգերի, ժամանակի և ծախսի ցուցանիշները, գ) անվճարունակության պարճառով լուծարման դեպքում անհրաժեշտ ընթացակարգերի, ժամանակի և փոխհատուցման չափի ցուցանիշները, դ) էլեկտրականության հասանելիության համար անհրաժեշտ ընթացակարգերի, ժամանակի և ծախսի ցուցանիշները:

տարվա համեմատ այն բարելավվել է 16 տեղով: Այս գործոնի գնահատականի լավացումը պայմանավորվել է 2012-2014թթ. Հայաստանում գրանցված միջին կշռված տարեկան գնաճի համեմատաբար ցածր՝ 3.66% մակարդակով (2011-2013թթ. Հայաստանում գրանցված միջին կշռված տարեկան գնաճը կազմում էր 5.74%): Վերջինս **դրամավարկային ազատություն** գործոնի 2016թ. գնահատականի հիմքում դրված ցուցանիշներից մեկն է: Ընդ որում, հաշվարկն իրականացվել է հետևյալ կերպ. 2012թ.-ի գնաճին, որը կազմել է 2.6% տրվել է ցածր՝ 0.09 կշիռ, իսկ 2013թ. և 2014թ. գնաճերին, որոնք կազմել են 5.786% և 3.1% տրվել են մեծ կշիռներ՝ համապատասխանաբար 0.245 և 0.665: Միևնույն ժամանակ նկատենք, որ **դրամավարկային ազատություն** գործոնի հիմքում դրվող մյուս՝ երկրում **կարգավորվող գների մակարդակը** բնութագրող ցուցանիշի պատճառով Հայաստանի դրամավարկային ազատության գնահատականը նվազեցվել է 15.0 միավորով:

- **«Առևտրի ազատություն»** գործոնի գնահատական նախորդ տարվա համեմատ **բարելավվել է** 0.2 միավորով և կազմել 85.6 միավոր, սակայն այս գործոնի գծով Հայաստանի դիրքը վատացել է 5 տեղով և Հայաստանը աշխարհի 178 երկրների թվում գրավում է 53-րդ տեղը: Դա նշանակում է, որ այս գործոնի գծով մյուս երկրների առաջընթացն ավելի մեծ է եղել: Հայաստանի «Առևտրի ազատություն» գործոնի գնահատականը բարելավվել է ի հաշիվ դրա հաշվարկման հիմքում ընկած արտաքին առևտրի միջին տարիֆի 0.1%-ով իջեցման: Նախորդ տարի արտաքին առևտրի միջին տարիֆը կազմում էր 2.3%, իսկ 2016թ. գեկույցում՝ 2.2%:
- **«Ներդրումների ազատություն»** գործոնի գնահատականը նախորդ տարվա համեմատ **բարելավվել է** 5.0 միավորով և կազմել 80 միավոր: Այս գործոնի գծով Հայաստանի դիրքը բարելավվել է 11 տեղով և Հայաստանը աշխարհի 178 երկրների թվում գրավում է 23-րդ տեղը: «Ներդրումների ազատություն» գործոնի գծով «Հերիթիջի» փորձագետները ընդգծում են օտարերկրացիների կողմից Հայաստանում հողը՝ որպես սեփականություն ձեռք բերելու արգելքի և բյուրոկրատական խոչընդոտների առկայությունը, որոնց պատճառով էլ Հայաստանի գնահատականը կազմում է ոչ թե 100, այլ 80 միավոր:
- **«Ֆինանսական ազատություն»** գործոնի գնահատականը նախորդ տարվա համեմատ չի փոխվել և կազմել է 70.0 միավոր: **«Ֆինանսական ազատություն»** գործոնի գծով Հայաստանի դիրքը նույնպես չի փոխվել և Հայաստանը, ինչպես և նախորդ տարի աշխարհի 178 երկրների թվում գրավում է 19-րդ տեղը: Ըստ «Հերիթիջի» մեթոդաբանության, 70 միավոր տրվում է երկրին, որտեղ առկա է սահմանափակ պետական միջամտություն ֆինանսական համակարգի գործունեությանը⁶: Ըստ «Հերիթիջի» փորձագետների, «Պետությունը այլևս բաժնեմաս չունի որևէ բանկում, սակայն բանկային հատվածը, որին պատկանում է ֆինանսական հատվածի ընդհանուր ակտիվների ավելի քան 90%-ը, դեռևս պայքարում է ադեկվատ երկարաժամկետ վարկեր մատուցելու համար»⁷:

Նկատենք, որ Հայաստանի տնտեսական ազատության ինդեքսի 21 տարիների պատմությունը ցույց է տալիս, որ տնտեսական ազատությունը Հայաստանում բարելավվել է 24.8 միավորով՝ 1996թ.-ի 42.2 միավորից 2016թ.-ին հասնելով 67.0 միավորի: Այս տարիների ընթացքում Հայաստանում գրանցվել են տնտեսական ազատության 10 գործոններից 8-ի բարելավում, որոնց

⁶ Աղբյուրը՝ *Promoting Economic Opportunity & Prosperity: The 2016 Index of Economic Freedom/Heritage Foundation & The Wall Street Journal*, էջ 476:

⁷ Աղբյուրը՝ *Promoting Economic Opportunity & Prosperity: The 2015 Index of Economic Freedom/Heritage Foundation & The Wall Street Journal*, էջ 98:

թվում են՝ **դրամավարկային ազատությունը, պետական ֆինանսների կառավարումը, առևտրի ազատությունը, ներդրումների ազատությունը և ֆինանսական ազատությունը:** Հետընթաց է արձանագրվել միայն «**Սեփականության իրավունքի պաշտպանության**» և «**Կոռուպցիայից ազատության**» գործոնների գծով: Հայաստանը տնտեսապես «ճնշված» երկրից այսօր դարձել է տնտեսապես «չափավոր ազատ»: Հայաստանի տնտեսության մասին «Հերիթիջի» փորձագետները նշում են հետևյալը. «Տնտեսական բազայի զգալի դիվերսիֆիկացումը մեծացրել է Հայաստանի տնտեսության դինամիզմը: Գործարարության գործընթացների զգալի պարզեցումը նպաստել է դրանց կարգավորման դաշտի արդյունավետությանը: Վերջին տարիների ընդլայնողական հարկաբյուջետային քաղաքականությունից հետո քայլեր են ձեռնարկվել կառավարության ծախսերը սահմանափակելու՝ պետական ֆինանսների խելամիտ կառավարման միջոցով: Չնայած Հայաստանը բավականին լավ կատարողական է գրանցել տնտեսական ազատության շատ ոլորտներում, այնուամենայնիվ առավել խորը ինստիտուցիոնալ բարեփոխումներ են հարկավոր այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են դատական անկախությունն ու կառավարության թափանցիկությունը: Չնայած կոռուպցիայի դեմ պայքարի առաջադիմությանը, քաղաքական ու գործարար շրջանակներում առկա սերտ հարաբերությունները քրոնիզմի (ընկերներին ու իրենց հետ կապված անձանց իշխանության նշանակելը՝ առանց նրանց որակավորումը պատշաճորեն հաշվի առնելու) և հատուկ-շահագրգռվածության երևույթների նկատմամբ մտահոգության տեղիք են տալիս»⁸:

Այժմ դիտարկենք ենթահինդեքսները **օրենքի գերակայության, կառավարության չափի, կարգավորման դաշտի արդյունավետության և բաց շուկաների** տեսանկյունից:

Օրենքի գերակայության տեսանկյունից գնահատվում են «**Սեփականության իրավունքի պաշտպանության**» և «**Կոռուպցիայից ազատության**» ենթահինդեքսները: Այս երկու գործոնների գնահատականներն էլ **ցածր են** համաշխարհային միջիններից:

Կառավարության չափի տեսանկյունից գնահատվում են «**Հարկաբյուջետային ազատության**» և «**Կառավարության ծախսումներ**» ենթահինդեքսները: Այս գործոնների գնահատականները **բարձր են** համաշխարհային միջիններից: Ըստ «Հերիթիջի» փորձագետների, «Եկամտային հարկի առավելագույն դրույքը 26% է, իսկ շահութահարկի առավելագույն դրույքը՝ 20%: Մյուս հարկերը ներառում են ավելացված արժեքի հարկը և ակցիզային հարկը: Հարկային ընդհանուր բեռը կազմում է ՀՆԱ-ի 23.4%-ը: Կառավարության ծախսումները կազմել են ՀՆԱ-ի 25.4%-ը և պետական պարտքը վերջին տարիներին հասել է ՀՆԱ-ի շուրջ 45%-ին»⁹:

Կարգավորման դաշտի արդյունավետության տեսանկյունից գնահատվում են «**Գործարարության ազատության**», «**Աշխատանքի ազատության**» և «**Դրամավարկային ազատության**» ենթահինդեքսները: Առաջին երկու՝ «**Գործարարության ազատության**» և «**Աշխատանքի ազատության**» գործոնների գնահատականները **բարձր են** համաշխարհային միջիններից: Ըստ «Հերիթիջի» փորձագետների, «Գործարար միջավայրի կարգավորման դաշտը համեմատաբար արդյունավետ է: Սկսնակ գործարարների համար նվազագույն կապիտալի պահանջը վերացվել է և սնանկացման գործընթացները արդիականացվել են: Աշխատուժի ոչ-աշխատավարձային ծախսը չափավոր է, սակայն ոչ ֆորմալ աշխատուժի շուկան ծավալուն է: 2015թ. հունիսին տեղի ունեցած հանրության բողոքի համատարած ցույցերը հանգեցրին նրան,

⁸ Աղբյուրը՝ *Promoting Economic Opportunity & Prosperity: The 2015 Index of Economic Freedom/Heritage Foundation & The Wall Street Journal*, էջ 98:

⁹ Նույն տեղում:

որ կառավարությունը դադարեցրեց ռուսական էլեկտրաէներգիա արտադրող ընկերության կողմից նախատեսված սակագնի բարձրացումը»¹⁰:

Բաց շուկաների տեսանկյունից գնահատվում են «Առևտրի ազատության», «Ներդրումների ազատության» և «Ֆինանսական ազատության» ենթահինդեքսները: Այս գործոնների գնահատականները նույնպես բարձր են համաշխարհային և տարածաշրջանային միջիններից:

Հայաստանի տնտեսական ազատության մակարդակը, 2000թ-ից սկսած, հիմնականում եղել է 60.0-69.9% միջակայքում (բացառությամբ 2004 և 2006թթ., երբ գնահատականները բարձր են եղել 70%-ից), այսինքն, ըստ «Հերիթիջի» դասակարգման, Հայաստանը վերջին 10 տարիների ընթացքում համարվել է տնտեսապես «չափավոր ազատ» երկիր, թեև հարկ է նշել, որ այդ տարիների ընթացքում Հայաստանի գնահատականը գրեթե միշտ մոտ է եղել միջակայքի առավելագույն սահմանին (տե՛ս աղյուսակ 1):

Հայաստանը տարածաշրջանային համապատկերում. Հայաստանը տնտեսական ազատության մակարդակով Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի ու նախկին ԽՍՀՄ երկրներից զիջում է մերձբալթյան երկրներին, Չեխիային, Վրաստանին, Լեհաստանին և Մակեդոնիային (տե՛ս աղյուսակ 2):

Եվրոպական տարածաշրջանի 44 երկրների շարքում Հայաստանը, ինչպես և նախորդ տարի, գրավում է 23-րդ տեղը, իսկ Վրաստանը զբաղեցնում է 12-րդ տեղը (տե՛ս աղյուսակ 3): Հայաստանի տնտեսական ազատության գնահատականը (67.0 միավոր) բարձր է եվրոպական տարածաշրջանի միջինից (66.9 միավոր):

Հայաստանի հետ մեկտեղ, տնտեսապես «չափավոր ազատ» երկրների շարքին են դասվում Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրները, բացառությամբ՝ Չեխիայի, որը «հիմնականում ազատ» երկիր է, իսկ Խորվաթիան ու Բոսնիա-Հերցեգովինան դասվում են «հիմնականում ոչ ազատ» երկրների թվին: Նախկին ԽՍՀՄ երկրներից տնտեսապես «չափավոր ազատ» երկրների թվին են դասվում նաև Ղազախստանն ու Ադրբեջանը (տե՛ս աղյուսակ 2): Նկատենք, որ, համաձայն «Հերիթիջի» գնահատականների, Ղրղզստանը, Խորվաթիան, Բոսնիա-Հերցեգովինան, Մոլդովան, Տաջիկստանն ու Ռուսաստանը համարվում են «հիմնականում ոչ ազատ», իսկ Բելառուսը, Ուկրաինան, Ուզբեկստանը, Իրանը և Թուրքմենստանը՝ «ճնշված» երկրներ:

«Հերիթիջ» հիմնադրամի «Տնտեսական ազատության ինդեքս 2016» զեկույցում երկրների առաջին տասնյակում են Հոնկոնգը, Սինգապուրը, Նոր Զելանդիան, Շվեյցարիան, Ավստրալիան, Կանադան, Չիլին, Իռլանդիան, Էստոնիան և Միացյալ Թագավորությունը, իսկ վերջին տասնյակում՝ Արգենտինան, Հասարակածային Գվինեան, Իրանը, Կոնգոյի հանրապետությունը, Էրիթրեան, Թուրքմենստանը, Չինբարվեն, Վենեսուելան, Կուբան և Հյուսիսային Կորեան:

Կից աղյուսակների տեսքով ներկայացվում են Հայաստանի 2000-2016թթ., նախկին ԽՍՀՄ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի, եվրոպական տարածաշրջանի երկրների, ինչպես նաև Իրանի 2016թ. տնտեսական ազատության ինդեքսների համեմատական գնահատականները՝ ըստ «Հերիթիջ» հիմնադրամի:

¹⁰Նույն տեղում:

Հայաստանի «Տնտեսական ազատության ինդեքսը» ըստ «Հերիթիջ» հիմնադրամի գնահատականների (2000-2016 թթ.) ¹¹

Աղյուսակ 1.

	2016	2015	2014	13	12	11	10	09	08	07	06	05	04	03	02	01	2000
Երկրների թիվը	178/186 ¹²	178/186	178/186	177/185	184	183	183	179	157	157	157	155	155	157	157	155	161
Երկրի դիրքը	54	52	41	38	39	36	38	31	30	34	27	25	23	37	32	46	62
«Տնտեսական ազատության ինդեքսը»	67.0	67.1	68.9	69.4	68.8	69.7	69.2	69.9	69.9	68.6	70.6	69.8	70.3	67.3	68.0	66.4	63.0
Սեփականության իրավունքը	20.0	20.0	30.0	30.0	30.0	30.0	30.0	35.0	35.0	30.0	50.0	50.0	50.0	50.0	50.0	50.0	50.0
Կոռուպցիայից ազատությունը	37.0†	36.0	26.7	26.0	26.0	27.0	29.0	30.0	29.0	29.0	31.0	30.0	25.0	25.0	25.0	30.0	30.0
Հարկաբյուջետային ազատությունը	83.8↓	84.4	86.5	88.0	89.3	89.2	89.3	90.0	89.0	89.7	90.0	89.9	90.0	88.9	88.3	81.9	79.3
Կառավարության ծախսումները	80.7↓	82.8	81.3	82.1	74.9	85.7	90.9	89.7	86.4	90.8	90.7	88.9	88.7	84.1	81.3	85.5	86.8
Գործարարության ազատությունը	77.5↓	82.7	83.1	87.6	87.8	82.4	83.4	83.7	81.3	80.8	77.6	55.0	55.0	55.0	55.0	55.0	55.0
Աշխատանքի ազատությունը	62.2↓	64.3	78.5	77.1	76.6	75.9	70.6	66.3	68.2	70.3	65.3	62.1	N/A	N/A	N/A	N/A	N/A
Դրամավարկային ազատությունը	72.8†	70.6	77.0	73.0	73.1	76.0	72.9	77.8	84.6	80.3	80.6	82.0	84.5	81.7	91.1	77.8	69.1
Առևտրի ազատությունը	85.6†	85.4	85.5	85.4	85.4	85.5	80.5	86.4	85.0	85.6	80.6	80.0	80.0	81.2	81.4	77.0	77.0
Ներդրումների ազատությունը	80.0†	75.0	70.0	75.0	75.0	75.0	75.0	70.0	70.0	60.0	70.0	70.0	70.0	70.0	70.0	70.0	50.0
Ֆինանսական ազատությունը	70.0	70.0	70.0	70.0	70.0	70.0	70.0	70.0	70.0	70.0	70.0	90.0	90.0	70.0	70.0	70.0	70.0

¹¹ «Հերիթիջ» հիմնադրամի մեթոդաբանության փոփոխության արդյունքում 2000-2008 թթ. «Տնտեսական ազատության ինդեքսի» գնահատականները վերահաշվարկվել են՝ հանգեցնելով նախկին հրապարակումների համեմատ փոքրեր փոքրների Հայաստանի դիրքի փոփոխության:

Աղբյուրը՝ <http://www.heritage.org/index/excel/DownloadRawData.xls>:

¹² 2016թ. ինդեքսում դիտարկվել են 186 երկրներ, սակայն դրանցից միայն 178 երկրներ են լիովին գնահատվել և վարկանշվել: Անբավարար տվյալների պատճառով Աֆղանստանի, Իրաքի, Լիբիայի, Լիբիայի, Սուդանի, Սիրիայի, Եմենի և Սոմալիի համար համախառն ինդեքսի գնահատական և, հետևաբար նաև, երկրի դիրք չի սահմանվել:

Նախկին ԽՍՀՄ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների
«Տնտեսական ազատության ինդեքսը» ըստ «Հերիթիջ» հիմնադրամի գնահատականների
(2016 թվական)

Աղյուսակ 2

Երկրի դիրքը աշխարհի 178 երկրների շարքում	Երկիր	Գնահատականներ									2016 թ. գնահատականն ըստ առանձին գործոնների									
		2016	2015	2014	13	12	11	10	09	08	Սեփականության իրավունք	Կոռուպցիայից ազատություն	Հարկաբյուջետային և ազատություն	Կատարողական ծախսումներ	Գործարարության ազատություն	Սչխտանքի ազատություն	Դրամավարկային ազատություն	Սոնտրի ազատություն	Սերրիումների ազատություն	Ֆինանսական ազատություն
9	Էստոնիա	77.2	76.8	75.9	75.3	73.2	75.2	74.7	76.4	77.9	90.0	69.0	81.9	54.9	79	57.2	82.2	88	90	80
13	Լիտվա	75.2	74.7	73.0	72.1	71.5	71.3	70.3	70	70.9	65.0	58.0	92.9	63.8	80	60.0	84.6	88	80	80
21	Չեխիա	73.2	72.5	72.2	70.9	69.9	70.4	69.8	69.4	68.1	75.0	51.0	82.5	47.3	66.6	77.7	84.1	88	80	80
23	Վրաստան	72.6	73.0	72.6	72.2	69.4	70.4	70.4	69.8	69.2	40.0	52.0	87.6	75.3	86.5	75.7	80.5	88.6	80	60
36	Լատվիա	70.4	69.7	68.7	66.5	65.2	65.8	66.2	66.6	68.3	50.0	55.0	84.8	58.4	78.6	59.5	84.8	88	85	60
39	Լեհաստան	69.3	68.6	67.0	66.0	64.2	64.1	63.2	60.3	60.3	65.0	61.0	75.5	46.5	68.7	58.0	85.2	88	75	70
47	Մակեդոնիա	67.5	67.1	68.6	68.2	68.5	66	65.7	61.2	61.1	35.0	45.0	92.1	69.6	76.4	66.7	83.5	86.4	60	60
54	Հայաստան	67.0	67.1	68.9	69.4	68.8	69.7	69.2	69.9	69.9	20.0	37.0	83.8	80.7	77.5	62.2	72.8	85.6	80	70
56	Սլովակիա	66.6	67.2	66.4	68.7	67.0	69.5	69.7	69.4	70.0	50.0	50.0	80.1	49.5	68.4	55.0	79.5	88	75	70
58	Հունգարիա	66.0	66.8	67.0	67.3	67.1	66.6	66.1	66.8	67.6	45.0	54.0	78.7	26.7	70.6	63.8	88.3	88	75	70
59	Ալբանիա	65.9	65.7	66.9	65.2	65.1	64.0	66.0	63.7	62.4	35.0	33.0	87.8	75.0	67.6	51.5	81.7	87.6	70	70
60	Բուլղարիա	65.9	66.8	65.7	65.0	64.7	64.9	62.3	64.6	63.7	30.0	43.0	91.1	60.4	66.9	71.6	82.6	88	65	60
61	Ռումինիա	65.6	66.6	65.5	65.1	64.4	64.7	64.2	63.2	61.7	35.0	43.0	87.5	65.6	66.1	65.1	81.1	88	75	50
65	Մոնտենեգրո	64.9	64.7	63.6	62.6	62.5	62.5	63.6	58.2	N/A	40.0	42.0	91.6	39.8	76.6	72.0	82.6	84.8	70	50

68	Ղազախստան	63.6	63.3	63.7	63.0	63.6	62.1	61.0	60.1	61.1	30.0	29.0	93.0	87.7	72.3	82.7	74.0	77.4	40	50
77	Սերբիա	62.1	60.0	59.4	58.6	58.0	58.0	56.9	56.6	N/A	50.0	41.0	84.3	44.1	60.2	66.2	77.5	77.8	70	50
79	Թուրքիա	62.1	63.2	64.9	62.9	62.5	64.2	63.8	61.6	59.9	40.0	45.0	75.2	55.6	65.4	48.6	71.5	84.4	75	60
84	Կոսովո	61.4	N/A	N/A	N/A	N/A	N/A	N/A	N/A	N/A	30.0	33.0	93.6	76.8	69.3	66.3	78.9	70.8	65	30
90	Սլովենիա	60.6	60.3	62.7	61.7	62.9	64.6	64.7	62.9	60.2	60.0	58.0	58.6	0.0	82	55.4	84.3	88	70	50
91	Ադրբեջան	60.2	61.0	61.3	59.7	58.9	59.7	58.8	58.0	55.3	20.0	29.0	88.0	56.7	70.3	75.2	77.0	75.8	60	50
96	Ղրղզստան	59.6	61.3	61.1	59.6	60.2	61.1	61.3	61.8	61.1	20.0	27.0	93.7	56.3	65.3	80.4	68.4	75	60	50
103	Խորվաթիա	59.1	61.5	60.4	61.3	60.9	61.1	59.2	55.1	54.1	35.0	48.0	70.8	33.7	60.3	42.4	78.7	87.4	75	60
108	Բոսնիա-Հերց.	58.6	59.0	58.4	57.3	57.3	57.5	56.2	53.1	53.9	20.0	39.0	83.9	33.1	54.6	59.4	84.3	87	65	60
117	Մոլդովա	57.4	57.5	57.3	55.5	54.4	55.7	53.7	54.9	57.9	40.0	35.0	85.4	55.6	64.6	39.3	76.0	73.6	55	50
149	Տաջիկստան	51.3	52.7	52.0	53.4	53.4	53.5	53	54.6	54.4	20.0	23.0	91.6	76.9	61.1	47.3	69.8	68.6	25	30
153	Ռուսաստան	50.6	52.1	51.9	51.1	50.5	50.5	50.3	50.8	49.8	20.0	27.0	82.2	56.2	72.2	57.6	62.9	72.4	25	30
157	Բելառուս	48.8	49.8	50.1	48.0	49.0	47.9	48.7	45.0	45.3	20.0	31.0	88.6	44.8	69	74.9	50.4	79	20	10
162	Ուկրաինա	46.8	46.9	49.3	46.3	46.1	45.8	46.4	48.8	51.0	25.0	26.0	78.6	30.6	56.8	47.9	66.9	85.8	20	30
166	Ուզբեկստան	46.0	47.0	46.5	46.0	45.8	45.8	47.5	50.5	51.9	15.0	18.0	90.4	66.6	67.1	61.9	65.6	65.6	0	10
171	Իրան	43.5	41.8	40.3	43.2	42.3	42.1	43.4	44.6	45.0	10.0	27.0	81.2	93.2	59.3	49.0	50.6	54.6	0	10
174	Թուրքմենստան	41.9	41.4	42.2	42.6	43.8	43.6	42.5	44.2	43.4	5.0	17.0	95.3	92.2	30	20.0	69.4	80	0	10
	Համաշխարհային միջին	60.7	60.4	60.3	59.6	59.5	59.7	64.3	74.8	76.3	42.4	43.7	77.1	62.7	64.4	59.8	75.7	75.8	56.5	48.6

**Եվրոպական տարածաշրջանի երկրների տնտեսական ազատության գնահատականները
ըստ «Հերիթիջ» հիմնադրամի (2016 թվական)**

Աղյուսակ 3

Երկրի դիրքը աշխարհի 178 երկրների շարքում	Դիրքը տարածաշրջանի 44 երկրների շարքում ¹³	Երկիրը	2016 թ. գնահատականը	Փոփոխությունը 2015թ. համեմատությամբ	2016 թ. գնահատականն ըստ գործոնների									
					Սեփականության իրավունք	Կրունկային ազատություն	Հարկարձեցման ազատություն	Կառավարության ծախսումներ	Գործարարության ազատություն	Աշխատանքի ազատություն	Դրամակրկային ազատություն	Առևտրի ազատություն	Ներդրումների ազատություն	Ֆինանսական ազատություն
4	1	Շվեյցարիա	81.0	0.5	90.0	86.0	70.9	66.3	82.2	72.1	87.8	90	85	80
8	2	Իռլանդիա	77.3	0.7	90.0	74.0	73.6	50.3	79.6	72.1	85.5	88	90	70
9	3	Էստոնիա	77.2	0.4	90.0	69.0	81.9	54.9	79	57.2	82.2	88	90	80
10	4	Միացյալ Թագ.	76.4	0.6	90.0	78.0	64.9	39.0	86	71.8	76.4	88	90	80
12	5	Դանիա	75.3	-1.0	95.0	92.0	39.5	2.3	95.4	86.0	84.4	88	90	80
13	6	Լիտվա	75.2	0.5	65.0	58.0	92.9	63.8	80	60.0	84.6	88	80	80
16	7	Նիդերլանդներ	74.6	0.9	90.0	83.0	52.7	34.4	80	64.0	83.4	88	90	80
17	8	Գերմանիա	74.4	0.6	90.0	79.0	61.5	41.3	90	50.6	83.3	88	90	70
19	9	Լյուքսեմբուրգ	73.9	0.7	90.0	82.0	61.1	43.0	73.7	42.6	83.2	88	95	80
20	10	Իսլանդիա	73.3	1.3	90.0	79.0	73.3	42.1	90.1	61.6	79.5	87.8	70	60
21	11	Չեխիա	73.2	0.7	75.0	51.0	82.5	47.3	66.6	77.7	84.1	88	80	80
23	12	Վրաստան	72.6	-0.4	40.0	52.0	87.6	75.3	86.5	75.7	80.5	88.6	80	60
24	13	Ֆինլանդիա	72.6	-0.8	90.0	89.0	66.5	0.8	90.7	53.7	81.9	88	85	80
26	14	Շվեդիա	72.0	-0.7	90.0	87.0	44.4	14.9	89.7	53.5	87.1	88	85	80
28	15	Ավստրիա	71.7	0.5	90.0	72.0	50.7	22.4	79.4	72.5	81.7	88	90	70
32	16	Նորվեգիա	70.8	-1.0	90.0	86.0	53.2	41.8	89.6	48.5	76.2	87.8	75	60
36	17	Լատվիա	70.4	0.7	50.0	55.0	84.8	58.4	78.6	59.5	84.8	88	85	60
39	18	Լեհաստան	69.3	0.7	65.0	61.0	75.5	46.5	68.7	58.0	85.2	88	75	70
42	19	Կիպրոս	68.7	0.8	70.0	63.0	76.1	47.3	74.5	58.2	85.3	88	75	50
43	20	Իսպանիա	68.5	0.9	70.0	60.0	58.3	41.1	76	51.7	84.7	88	85	70
44	21	Բելգիա	68.4	-0.4	80.0	76.0	44.2	11.0	85.4	60.5	84.0	88	85	70
47	22	Մակեդոնիա	67.5	0.4	35.0	45.0	92.1	69.6	76.4	66.7	83.5	86.4	60	60
54	23	Հայաստան	67.0	-0.1	20.0	37.0	83.8	80.7	77.5	62.2	72.8	85.6	80	70

¹³ 2016թ. ինդեքսում ներգրավված Եվրոպական տարածաշրջանի 45 երկրներից միայն 44 երկրներ են լիովին գնահատվել և վարկանշվել: Անբավարար փվյալների պատճառով Լիխտենշտեյնի համար համախառն ինդեքսի գնահատականն և, հետևաբար նաև, երկրի դիրքը չի սահմանվել:

55	24	Մալթա	66.7	0.2	70.0	55.0	63.9	46.5	61.6	53.5	83.5	88	85	60
56	25	Սլովակիա	66.6	-0.6	50.0	50.0	80.1	49.5	68.4	55.0	79.5	88	75	70
58	26	Հունգարիա	66.0	-0.8	45.0	54.0	78.7	26.7	70.6	63.8	88.3	88	75	70
59	27	Ալբանիա	65.9	0.2	35.0	33.0	87.8	75.0	67.6	51.5	81.7	87.6	70	70
60	28	Բուլղարիա	65.9	-0.9	30.0	43.0	91.1	60.4	66.9	71.6	82.6	88	65	60
61	29	Ռումինիա	65.6	-1.0	35.0	43.0	87.5	65.6	66.1	65.1	81.1	88	75	50
64	30	Պորտուգալիա	65.1	-0.2	70.0	63.0	60.5	24.8	85.3	43.5	85.7	88	70	60
65	31	Մոնտենեգրո	64.9	0.2	40.0	42.0	91.6	39.8	76.6	72.0	82.6	84.8	70	50
75	32	Ֆրանսիա	62.3	-0.2	80.0	69.0	47.7	2.5	78.4	43.5	79.1	83	70	70
77	33	Սերբիա	62.1	2.1	50.0	41.0	84.3	44.1	60.2	66.2	77.5	77.8	70	50
79	34	Թուրքիա	62.1	-1.1	40.0	45.0	75.2	55.6	65.4	48.6	71.5	84.4	75	60
84	35	Կոսովո	61.4	N/A	30.0	33.0	93.6	76.8	69.3	66.3	78.9	70.8	65	30
86	36	Իտալիա	61.2	-0.5	50.0	43.0	55.8	22.1	70.3	53.0	84.5	88	85	60
90	37	Սլովենիա	60.6	0.3	60.0	58.0	58.6	0.0	82	55.4	84.3	88	70	50
103	38	Խորվաթիա	59.1	-2.4	35.0	48.0	70.8	33.7	60.3	42.4	78.7	87.4	75	60
108	39	Բոսնիա-Հերց.	58.6	-0.4	20.0	39.0	83.9	33.1	54.6	59.4	84.3	87	65	60
117	40	Մոլդովա	57.4	-0.1	40.0	35.0	85.4	55.6	64.6	39.3	76.0	73.6	55	50
138	41	Հունաստան	53.2	-0.8	40.0	43.0	64.4	0.0	73.8	50.2	77.7	83	60	40
153	42	Ռուսաստան	50.6	-1.5	20.0	27.0	82.2	56.2	72.2	57.6	62.9	72.4	25	30
157	43	Բելառուս	48.8	-1.0	20.0	31.0	88.6	44.8	69	74.9	50.4	79	20	10
162	44	Ուկրաինա	46.8	-0.1	25.0	26.0	78.6	30.6	56.8	47.9	66.9	85.8	20	30
		Տարածաշրջանային միջին	66.9	0.0	59.8	57.6	72.3	41.8	75.4	59.5	80.5	86.0	73.9	62.0